

պոետ, երգահան, սցենարիստ, բեմադրիչ:

Կենսագրական՝
Ծնվել է Երևանում 1961թ. հունիսի 2-ին:
1968 - 1978 թ.թ. սովորել է Ա. Ս. Պուշկինի անվան ռուսական միջնակարգ դպրոցում:
1979 – 1984 թ.թ. սովորել է Երևանի Պետ. Համալսարանում, երկրաբանական ֆակուլտետի երկրաֆիզիկայի բաժնում: 1984 – 1989 թ.թ. աշխատել է Երևանի Քանաքեռի Երկրաբանա-երկրաֆիզիկական արշավախմբում, այնուհետ զբաղվել է զուտ ստեղծագործական աշխատանքով՝ թատրոններում, հեռուստատեսությունում, ռադիոյում:

Ամուսնացած է, ունի երկու երեխա՝ Հայկ Զորիկյան /Ծնվ. 1983 թ./ և Սիրարփի Զորիկյան /Ծնվ. 1994թ./ :



Ստեղծագործական կենսագրական՝
1. 300-ից ավելի երգերի և բանաստեղծությունների հեղինակ է,
2. Հեղինակն է "Խայտաբղետ այս աշխարհում առաջին հայկական ռոք-օպերայի /լիբրետո և երաժշտություն/ ,
3. Համագործակցել է "Եռանկյունի", "Հենրիկ Մալյան", "Մետրո", "Համազգային" թատրոնների հետ,
4. Գրել է երգեր և երաժշտություն՝ "Գոմաղբի բզեզը", "Դիպլիպիտո", "Ֆրանսուա Վիյոն", “Այրվող մոմեր”, “Աներևույթ թագավորությունը” ներկայացումների համար,
5. "Սանտա Կրուսե մյուզիքլի լիբրետոյի հեղինակն է,
6. Բեմադրել է "Համլետ", "Պահապանեք միմյանց, մարդիկ" մենաներկայացումները,
7. Կազմակերպել է Լեոնիդ Ենգիբարովի 70-ամյակին նվիրված երեկոն, որը ամբողջությամբ

նկարահանել և արխիվացրել է "ԱՐ" TV-ն,
9. Հեղինակն ու վարողն էր "Ինքնագիր" և "Բարդերի մոլորակը ռադիշարերի",
10. Հեղինակն ու վարողն էր "Կուկիսներ" TV ծրագրի,
11. "Ելակետ" TV ծրագրի ռեժիսորն էր,
12. "Ոսկե կիթառ" հեղինակային երգի Հանրապետական Փառատոնի գեղարվեստական ղեկավարն է,
13. Պարգևատրվել է ՀՀ Մշակույթի Նախարարության "Ոսկե մեդալ"- ով,
14. Բազմիցս պարգևատրվել է ՀՀ Մշակույթի Նախարարների կողմից,
15. "Ոսկե լար" Փառատոնի "Գրան Պրի" մրցանակակիրն է,
16. Պարգևատրվել է Երևանի Քաղաքապետերի կողմից
ա. Երևանին նվիրված լավագույն երգի համար,
բ. Հեղինակային երգի ասպարեզում խոշոր ներդրում ունենալու համար,
17. Բազմաթիվ Փառատոների և մրցույթների դիպլոմակիր է,
18. Թողարկվել են էդուարդ Զորիկյանի երգերի 3 CD-րը և 4 ձայներիզները,
19. ՀՀ ոստիկանության 8-րդ տարեդարձին նվիրված /2009թ./ կառավարական տոնական համերգի սցենարի և երաժշտական ձևավորման հեղինակն է:
20. Հյուրախաղային մենահամերգներով հանդես է եկել Կանադայում, Չեխիայում, Ռուսաստանում, Լիբանանում, Ֆրանսիայում, ԼՂՀ – ում,
21. Մասնակցել է թատերական հյուրախաղային և փառատոնային ներկայացումներին Միացյալ Արաբական էմիրություններում, Կանադայում, Ֆրանսիայում և ԼՂՀ –ում :

[էդուարդ Զորիկյանի տեսա-լսադարանը]